

Ղարաբաղը. Հայկական Հող Մը Ատրպէյճանի Մէջ(*)

Հեղինակներ՝ ՓԱԹՐԻԳ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ, ԱՐՄԷՆ ՄԻԻԹԱՅԵԱՆ

Արցախեան դէպքերը գրաւեցին համաշխարհային հանրութեան ուշադրութիւնը, սակայն շատ բաներ տակաւին կը մնան անհասկնալի ու մշուշապատ, իսկ շատ շատերու համար Արցախեան պահանջատիրութիւնը կը ներկայանայ իբրեւ սովորական հողային հարց, քաշքշուք...

Անցնող ամիսներուն շատ բարեկամներ օտար շրջանակներէ՝ յաճախ տրամադրութիւններ ցոյց տուին ըստ էութեան գիտնալու հարցին ամբողջական ու իրական պատմութիւնը, իսկ մենք, բացի կարգ մը թերթերէ - մանաւանդ Փրանսա, Անգլիա, ԱՄՆ եւ Հարաւային Ամերիկա լոյս տեսնող հայկական թերթերու օտար լեզուով հրատարակուած էջերէն կտրուած քանի կտրոններէ՝ ուրիշ բան չկրցանք տրամադրել առ որ անկ է: Զարմանալի ժողովուրդ ենք. ամբողջ հոգիով հաւատացած ենք մեր պահանջին - եւ մեր ալ պահանջներու - արդարացիութեան, սակայն չունինք համապատասխան հրատարակութիւններ, որոնցով կարենանք գոհացում տալ մեր օտար բարեկամներուն, հետաքրքրուողներուն եւ առհասարակ համաշխարհային հանրութեան:

Ընդունինք որ թերացած ենք այս իմաստով Արարական աշխարհին մէջ, ուր գտանք ասպնջականութիւն, ուր կայ նաեւ տրամադրութիւն մեզ լսելու, բայց չկան հանրամատչելի ու գիտական հրատարակութիւններ(**): Օրինակ, Արցախեան խաղաղ ցոյցերու առիթով, մինչ արեւմտեան մամուլը կը տողողէր քրիստոնեայ-մահմետական հակադրութեամբ մը մեկնաբանել ամէն ինչ, մենք կրցանք անմիջապէս հանդէս գալ բացատրութիւններով ու զանազան ձեռնարկներով ի դէմս մահմետական աշխարհին: Ընդունինք որ արեւմտեան զանգուածային լրատուութեանց կողմէ Ղարաբաղեան շարժումին մասին սաղորիշ լուրերու եւ մեկնաբանութեանց դիմաց մենք չափինք պէտք եղած նախազգուշական քայլերը:

Ահաւասիկ այս խոհերը կրկին անգամ ունեցայ երբ ձեռքս անցաւ Փրանսա տպուած շատ շնորհակալ, թէեւ ծաւալով փոքր բայց բովանդակութեամբ ու նպատակներով մեծապէս դրուատանքի արժանի գիրք մը, որուն մասին պիտի փոփաքէի անդրադառնալ հոս:

«Ղարաբաղ. Հայկական Հող մը Ատրպէյճանի մէջ» գիրքը ելած է երկու ազնիւ ֆրանսահայեր՝ Փաթրիք Տօնապետեանի ու Արմէն Միւթաֆեանի գրիչէն: Փ. Տօնապետեան արուեստի պատմաբան է, Դոկտորայի կոչումը ստացած է Լենինկրատի Գեղարուեստից համալսարանէն, դասընթացքներու հետեւած Երեւանի համալսարանը, մասնագէտ՝ Անդր-Կովկասի միջնադարեան արուեստի, թիզ առ թիզ ուսումնասիրած է պատմաճարտարապետական յուշարձանները, այլեւ մանաւանդ Արցախի վանքերը, ունի բազմաթիւ ուսումնասիրութիւններ եւ, հեղինակակցութեամբ Ժ. Մ. Թիերիի, հրատարակած է «Հայկական Արուեստները» ծանրակշիռ ուսումնասիրութիւնը: Արմէն (Գլոս) Միւթաֆեան մաթեմատիկոս է, Ecole Normal Supérieure-էն, Փարիզ XIII (Վիլլըթանէօզ) համալսարանի

մաթեմատիկոսներու համախմբումի տեսուչ, հեղինակ է ուսողութեան դասագիրքերու շարքի մը, բայց յատկապէս կը հետաքրքրուի Միջին Արեւելքով, որուն պատմութիւնը անբակտեիօրէն կապուած է Հայաստանի հետ, վերջերս ֆրանսերէն լեզուով հրատարակ հանեց «Կիլիկեան Կայսրութիւններու Ուշմերուկին» երկհատոր ուսումնասիրութիւնը:

Ուշագրաւ այս գրքոյկը հրատարակուած է ֆրանսական «Փոքրամասնութեանց Իրաւունքներու Համախմբում»ին կողմէ: Բանի մը խօսք այս կազմակերպութեան մասին: Նախ՝ քաղաքական կազմակերպութիւն մը չէ եւ անկախաբար յառաջ կը տանի իր գործունէութիւնները, որոնց հիմնական նպատակն է պաշտպանել աշխարհի բոլոր փոքրամասնութեանց իրաւունքները՝ ելլելով ՄԱԿի կողմէ որդեգրուած Մարդկային Իրաւունքներու սկզբունքներէն: Հետաքրքրական է «Համախմբում»ին աշխատանքային կերպը, որ ունի երեք հիմնական երես՝ խորհրդածութիւն, տեղեկատուութիւն եւ միջամտութիւն. այս վերջինով, ինչպէս կը հասկնանք «Համախմբում»ի համառօտ ներածականէն, կազմակերպութիւնը կրնայ որոշել՝ ուղղակի կերպով միջամտութիւններ կատարել պետական հեղինակութիւններու մօտ՝ ի պաշտպանութիւն փոքրամասնութեանց իրաւունքներու»: Հետեւաբար, սոյն գրքոյկը կը հանդիսանայ միջազգային արձագանգ մը, գրեթէ առաջիններէն, ուր հանգամանօրէն կը խօսուի Արցախեան պահանջատիրութեան եւ հարցին ծնունդ տուող պատմա-քաղաքական պատճառներուն մասին:

«Ղարաբաղի պատմութիւնը, տնտիկ շրջանէն մինչեւ 19րդ դարը» գլխուն ինք բաժիններուն մէջ Փ. Տօնապետեան՝ հիմնուելով օտար եւ հայ սկզբնաղբիւրներու վրայ, ցոյց կուտայ Արցախի հայկականութիւնը, հետեւաբար, պատմագիտական անաշուտութեամբ պատասխան կը տրուի ազերի վայ-գիտնականներու ու պատմաբաններու այն ճիգերուն, որով կը փորձեն պատշաճեցնել պատմութիւնը՝ յաշտ աշխարհի, աւելի որոշակի՝ յաշտ խորհրդային պատմաբաններու (դժբախտաբար): Յաջորդ՝ «Ղարաբաղը 20րդ դարուն» գլխուն մէջ Ա. Միւթաֆեան Անդր-Կովկասի տատմական անցուդարձերու արալ հոլովոյթներուն զուգընթաց, քայլ առ քայլ կը ներկայացնէ Ղարաբաղի հայ բնակչութիւնը ջարդերու միջոցաւ նուազեցնելու՝ ազերի-մուսաւաթական, երիտ-թուրքական կազմակերպուած ու սիստեմատիկաբար գործադրուած ջանքերը: Ապա, հեղինակը կ'անդրադառնայ Անգլիական գաղութատիրութեան խաղցած ժխտական դերին, որով Ղարաբաղի մարզը կտրուելով Հայաստանէն, կը տրուէր Մուսաւաթական կառավարութեան: Ա. Միւթաֆեան հանգամանօրէն ցոյց կուտայ հետագայ բաժիններուն մէջ խորհրդային շրջանին խորհրդային Ատրպէյճանի կառավարութեան ու կուսակցութեան, ինչպէս նաեւ Մոսկիւի անշեղ քաղաքականութիւնը՝ ի վնաս հայութեան եւ Ղարաբաղի միացման խորհրդային Հայաստանին: Հեղինակը մտնալով ուշադրութեամբ մը կը ներկայացնէ նաեւ հայ բնակչութեան պարուումը, այդ իւրաքանչիւր արիւնահոսութիւնը, հայկական դպրոցներու անտեսումն ու տողջապահական զանազան հիմնարկներու թողլքուածութիւնը: Ներկայացուող հրատարակութիւնը գիտական աշխատանք մըն է նաեւ՝ քարտէզներ, հնագոյն պատմական վկայութիւններ հայ եւ օտար



Արմէն-Գլոս Մութաֆեան

պատմիչներէ, ինչպէս նաեւ հայկական, անգլիական, ռուսական եւ ֆրանսական աշխատութիւններէ մէջբերումներ, եւ լուսանկարներ ամբողջովին կ'ապահովեն գիտական աշխատութիւն մը որակուելու երաշխիքները: Կը մնայ մեզի պարզապէս ամբողջ ծայնով գոռալ, որ հարկաւոր է նման գիրքեր շուտափոյթ կերպով թարգմանել բազմաթիւ լեզուներու՝ ի շահ Հայ Արցախին, հայութեան Դատին եւ մարդկային իրաւունքներու պաշտպանութեան:

ՄԻՆԱՍ Ս. ԳՈՃԱՅԵԱՆ Նիկոսիա

(*) LE KARABAGH Une terre arménienne en Azerbaïdjan Patrick Donabedian, Claude Mutafian Edité par le Groupement pour les Droits Des Minorités, PARIS, 1989:

(**) Ամենայն յարգանք Լիրանանի եւ Սուրբայի մէջ լոյս տեսած քանի մը յօդուածներու եւ գիրքերու՝ արար թէ հայ հեղինակներու, սակայն եղածը բաւարար ըլլալէ հետո կը գտնուին:



ԱՐՑԱՒԱՆ - Խորհրդային մամուլին կողմէ հրատարակուած Բնականարար, բերքերը չեն յիշատակեր մարդոց ազգային ծագումը, ոչ ալ անոնց հետապնդուած նպատակը, որոնք արգելի կ'ըլլան քաղաքեան յառաջացումին: